№ 123 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31 **1891** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31 № 123

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պանդխտութեան հետևանքներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Երևանից. Նամակ Բաթումից. Թղթին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վիրջիի եօթանասնամեայ յօբելեանը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մոսկվայի հայ հասարակութիւնը.

ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

—

Տարիների ընթացքում հայ գիւղացին և հայ արհեստաւորը անդադար պանդխտում են իրանց բնիկ երկրից, թողնելով իրանց ծննդավայրում իրանց ընտանիքը, և գնում, նոր բաղդ են որոնում թէ Անդրկովկասի ու Կովկասի և թէ Ռուսաստանի մեծ քաղաքներում:

Մենք շատ անգամ ցոյց տուեցինք մեր բազմաթիւ յօդուածներում այդ տեսակ պանդխտութիւնից առաջացած բազմակողմանի վնասները: Մենք, ի հարկէ, յոյս չունէինք որ մեր յօդուածները կը կարդան իրանք հայ գիւղացիք կամ հայ արհեստաւորները. մենք շատ լաւ գիտենք, որ այդ դասակարգերին պատկանող հայը անգրագէտ է, ուրեմն նրան մատչելի չէ հայոց մամուլի խօսքը, բայց մենք մեծ յոյս ունէինք մեր զաւառական ընթերցող ինտելիգենցիայի վրա: Մենք հաւատացած էինք, որ մեր զաւառական բազմաթիւ ինտելիգենցիան, կարդալով մեր յօդուածները, մեր մտքերի միջնորդը, նրանց թարգմանն ու տարածողը կը դառնայ և յօդուածները հետզհետէ կարդալուց և ըմբռնելուց յետոյ, կը ջանայ հասկացնել ժողովրդին նրանց իմաստը, կաշխատէ զգուշացնել հայ գիւղացուն և արհեստաւորին, բացատրելով նրանց՝ անմիտ և ապարդիւն պանդխտութիւնից առաջանալի մեծ վնասները, այդպիսով պանդխտութեան վնասակար և անընդհատ հոսանքին առաջն առնելով:

Սակայն մենք սխալվեցանք մեր յոյսերի մէջ. մեր զաւառական ինտելիգենցիան խուլ մնաց մեր յայտնած մտքերին, անտարբեր մնաց ժողովրդի պանդխտական կորստաբեր ձգտման և ոչինչ ջանք չարեց համոզելու հայ գիւղական և արհեստաւոր ժողովուրդին չը թողնել իր ծննդավայրերն ու իր ընտանիքը և չը գաղթել հեռու երկիրներ, ապրուստի անհաստատ աղբիւրներ որոնելու նպատակով, ոչինչ միջոց չը գործ դրեց՝ ժողովրդին բացատրելու պանդխտութեան կորստաբեր հետևանքները....

Զաւառական ինտելիգենցիան, մեր սպասածին հակառակ, անտարբեր մնաց այդ գործում, ինչպէս շատ ուրիշ հարցերում, իսկ ժողովուրդը զուրկ մնալով մտաւոր առաջնորդներից, կոյր մնաց իր մոլորութեան մէջ և կուրօրէն ու մեքենայաբար շարունակեց միշտ պանդխտել ու պանդխտել.... Եւ որովհետև ժողովրդական ամեն տեսակ շարժումները մեծ մասամբ վարակիչ են լինում, ամբոխը շատ անգամ անգիտակցաբար հետևում է կապկօրէն իրան շրջապատող երևոյթների օրինակին, այդ պատճառով հայ գիւղական և արհեստաւոր տարրի պանդխտութեան հոսանքը տարիների ընթացքում հետզհետէ աւելի և աւելի ընդարձակվեց, աւելի և աւելի ընդարձակ չափեր ընդունեց:

Վերջապէս պանդխտութիւնը ընդունեց այնպիսի կերպարանք, որ շատերի համար այլ ևս հնարաւոր չեղաւ վերադարձ դէպի հայրենիքը: Դրա հետևանքն ի՞նչ եղաւ. օտարութեան մէջ մշտապէս բնակութիւն հաստատած պանդուխտը սկսեց պահանջել որ և իր ծննդավայրում անխնամ թողված ընտանիքն էլ վերկենայ, գայ օտարութեան մէջ, իր հետ մշտական բնակութիւն հաստատէ:

Եւ ահա ինչ տեսակ նոր երևոյթ է հանդիսանում այժմ մեր առջև. առաջվայ ժամանակներում մարդը մենակ էր հեռանում իր բնիկ երկրից, մի քանի տարի հեռու էր մնում իր մայրենի վայրերից, բայց գոնէ կինն ու զաւակները մնում էին հայրենիքում և այդպիսով մայրենի հողում բնիկ աղգաբնակութիւնը համեմատաբար շատ աննշան թւով էր պակասում: Երբ ընտանիքը իր տեղումն էր մնում,—դարձեալ յոյս կար, որ մարդը վաղ թէ ուշ կը վերադառնայ, թէև գուցէ բարոյապէս փչացած, ֆիզիկապէս հիւանդ. բայց երբ որ, ինչպէս այժմ, գիւղական կամ արհեստաւոր տարրին պատկանող ամբողջ ընտանիքը, տուն ու տեղը թողած, վեր է կենում, գնում է օտարութիւն, ընդմիշտ այնտեղ բնակութիւն հաստատելու համար,—այդ տեսակ երևոյթից առաջացած վնասը արդէն անբուժելի է, անուղղելի է.... Պանդխտած ընտանիքի տեղը թափուր է մնում և այնուհետև հայ ազգաբնակութեան թիւը մեր երկրում կը սկսի հետզհետէ պակասել, նուազել շոշափելի կերպով:

Եւ միթէ մեր զաւառական ինտելիգենցիան գոնէ այժմ չի սթափվի իր թմրութիւնից, իր յանցաւոր անտարբերութիւնից և չի աշխատի իր խօսքի, իր բարոյական ներգործութեան միջոցով ազդել կոյր ամբոխի վրա, որը կապկօրէն և մեքենայաբար հետևելով անմիտ և ապարդիւն ընդհանուր հոսանքին, անգիտակցաբար է ենթարկվում շրջապատողների պանդխտական վարակիչ, անխղճատակ և կորստաբեր ձգտման....

Եւ ինչպէս երևում է պանդխտութեան այդ նոր և վերին աստիճանի կորստաբեր ձևի օրինակ ցոյց տուողները՝ ազդուլեցիք են լինելու:

Թող մեր ընթերցողը կարդայ „Մշակի“ № 121-ի մէջ տպված, Ներքին-Ագուլիսից գրված թղթակցութիւնը,—և նա կը համոզվի մեր ասած խօսքերի ճշմարտութեան մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 12-ին

Ահա երկրորդ անգամն է, որ ես բաղդ ունեմ գտնվել Արարատեան աշխարհի այս պատմական քաղաքում: Երևանը Արարատեան աշխարհի ամենահին քաղաքներից մէկն է: Պատմութիւնը վկայում է, որ դա է Երուանդաւանը «որ ի վերայ Հրազդան գետոյ, մերձ ի վանս Էջմիածնի»: (Տես «Այրարատ» երես 303): Թողնելով մի պատեհ ժամանակի խօսել Երևան քաղաքի անցեալ կեանքի մասին, այս անգամ կը գրեմ համառօտ Երևանի այժմեան տեսքը: Երևանը բուն ասիական քաղաք է և աւելի պարսկական տեսք ունի: Երևանի շուկաները տեսնելիս ես յիշեցի Թավրիզի և Թեհրանի [illegible], նոյն ծածկած «չարսուները», նոյն «մաշադիները», նոյն պարսիկը: Երևանում տիրում է մշտական կեղտոտութիւն, մշտական անմաքրութիւն, այդ կօպէկներով առած հացը անմահական հաց կը լինի, այնպէս որ քաղցածը էլ հացի կարօտութիւն չի զգայ: Բայց, որովհետև դուք այդ բոլորը հաստատել չէք կարող, պէտք է էլ հարուստի գահլան չը տանէք. դուք կը գնաք չօաք գցել կը սովորէք, փողը կը մնայ հարուստի գրպանում, իսկ քաղցածը սովից կը մեռնի, անպատճառ կը մեռնի:

Ի հարկէ, այստեղ բացի հաշուապահական տեսակէտից ուրիշ պատճառ էլ կայ.—այդպէս վերաբերվող հարուստը շատ էլ չէ սիրում իր քաղցած եղբօրը, նրա սրտից արիւն չէ քամվում, երբ որ տեսնում է քաղցածի տանջանքները: Եթէ նա իսկապէս սիրէր քաղցածին, եթէ նա սրտանց ցաւակցէր նրան, չէր կանգնի ու մեռնող քաղցածի կողքին չօաք գցի, այլ հաց կը տար նրան ուտելու:

Բացի հաշուապահական բարեգործութիւնը մոռանալուց, մոսկվացիները մի բան էլ պէտք է անեն, որ կարելի լինի հաստատ ասել թէ նրանք քնից բոլորովին զարթնել են: Նրանք պէտք է մի նոր հայեացք իւրացնեն, այն է՝ թէ վնաս տալիս է ոչ միայն նա, որ սպանում է, կողոպտում է, այլ և նա որ կարող է օգնել սպանութեան զոհին և չէ օգնում: Ճանապարհորդին վիրաւորող աւազակը, աւազակի յարձակվելու ժամանակ զոհին օգնութեան չը հասնող ճանապարհորդակիցը և վիրաւորվածի կողքով անտարբերութեամբ անցնող նոր ճանապարհորդները—իրարից շատ չեն տարբերվում բարոյական տեսակէտից: Վիրաւորվածի արիւնը նրանց բոլորի դէմ էլ կը բողոքի, վիրաւորվածի մահը նրանց բոլորի խղճի վրա էլ պէտք է ծանրանայ:

Մոսկվացիները չը պէտք է մոռանան աւետարանի խօսքերը «ես քաղցած էի և դուք հաց չը տուեցիք ինձ, ես ծարաւ էի և դուք ջուր չը տուեցիք ինձ»:

Տ. Ց.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՍԿՎԱՑԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

—

Մարդ երբ որ տեսնում է մի կողմից թէ ինչ այժեր կան Մոսկվայի հայ հասարակութեան մէջ և համեմատաբար ինչ աջող պայմաններում են գտնվում նրանք (մայրաքաղաք, համալսարան կենտրոն և այլն) և միւս կողմից թէ որքան անօգուտ են մնացել մինչև այժմ այդ այժերը,—մնում է զարմացած: Ինչն էր պատճառը որ մինչև այժմ այդ այժերը անօգուտ էին մնում: Պատճառն այն էր, որ Մոսկվայի հայ հասարակութիւնը կազմող հարուստները (նիւթական այժերը) հասարակական—բարոյական պարտականութիւններ չէին զգում, իսկ պրոֆէսորները, բժիշկները փաստաբանները, ուսուցիչները, քահանաները, մտաւոր բարոյական այժերը բոլորովին զուրկ չը լինելով հասարակական զգացմունքներից, բայց և հասարակական գործունէութեան վերաբերմամբ դիլետանտներ լինելով, չեն աշխատել համոզել հարուստներին, որ «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ և բանիւ Աստուծոյ»:

Ահա երբ որ Մոսկվայի հայ հարուստները բոլորովին կը համոզվեն, որ «միայն հացով չէ ապրում մարդ», երբ որ նրանք կը սկսեն օգնել չքաւոր ուսանողներին, ուսումնարաններին և այլն ոչ թէ նրա համար, որ «խնդրում են, մերժել չէ կարելի, պէտք է մի բան տալ», այլ նրա համար, որ կը գիտակցեն թէ իրանք պարտական են օգնելու, երբ որ Մոսվայի հայ ինտելիգենտները ոչ միայն զատկէ-զատիկ կը յիշեն իրանց հասարակական պարտականութիւնները, այլ ամեն օր, այն ժամանակ Մոսկվայի հայ կոլոնիան կը բռնի իրան վայել դիրքը, այն ժամանակ նա օրինակ կը դառնայ միւս կոլոնիաների համար:

Դիմելով դէպի այդ փառաւոր ապագան, Մոսկվայի հայերն ամենից առաջ պէտք է մոռանան մի հին սովորութիւն և իւրացնեն մի նոր հայեացք:

Մոսկվայի հայերը պէտք է դէն գցեն իրանց հին սովորութիւններից մէկը,—նայել հասարակական գործերին հաշուապահութեան, բուխգալտերիայի տեսակէտից: Թէ ինչ տարբերութիւն կայ մի որ և է իրողութեան կենդանի զգացմունքով վերաբերվելու և հաշուապահական տեսակէտով վերաբերվելու մէջ՝ պարզենք օրինակով: Ես կամաւ մի քիչ արուեստական օրինակ եմ վերցնում: Դիցուք դիմում են մի հարուստին, խնդրելով օգնութիւն ի նպաստ մի որ և է երիտասարդ երգչի, որ մինչև այժմ հնարաւորութիւն չէ ունեցել ձայնը կատարելագործելու, իսկ այժմ՝ սկսելով սովորել կանոնաւոր երգեցողութիւն՝ փայլուն ապագայ է խոստանում: Ինչ էք կարծում, ինչպէս կը վերաբերվեն այդ գործին կենդանի զգացմունքի տէր մարդիկ: Անկասկած առանց երկար ու բարակ խօսելու կօգնեն, եթէ, ի հարկէ, միջոց ունեն օգնելու, և եթէ երգեցողութիւնը անօգուտ կամ աննշան գործ չեն համարում. ուրիշ հարց է, եթէ նրանք ասեն, որ չարժէ տարիներ աշխատել երգել սովորելու համար, չարժէ փողեր ծախսել երգիչների վրա: Բայց կարելի է այդ գործին և ուրիշ տեսակ վերաբերվել, կարելի է նայել այդ գործի վրա հաշուապահական տեսակէտից: Դուք ասում էք, որ նա փայլուն ապագայ է խոստանում, ինձ ապացուցէք այդ և ես այն ժամանակ ուրախութեամբ կը կատարեմ ձեր խնդիրքը. եթէ ես իմանայի, որ այդ երիտասարդը անպատճառ Մազինի կը դառնայ, անպատճառ կօգնէի, բայց վախենում եմ, կարող է պատահել, որ նրա ձայնը կտրվի, գուցէ ինքը ծուլանայ ու ուսումը չաւարտի, գուցէ փողերս քէֆի վրա գործ դնի և այլն և այլն: Դուք հաւատացնում էք, որ նա լաւ ձայն ունի, դուք ասում էք, որ կօնսերվատորիայի պրոֆէսորները, որոնք պատահմամբ լսել են նրա երգելը, հիացած են նրա ձայնից. դուք ապացուցանում էք, որ նա լուրջ մարդ է. ես ձեզ հաւատում եմ, բայց այդ բաւական չէ, այ, եթէ նա բեմ դուրս գար և մի որ և է օպէրայում աջողութեամբ երգեր (ես մուզիկայից բան չեմ հասկանում, բայց ծափահարութիւններից ու լրագիրների գովելուց գաղափար կը կազմէի), այն ժամանակ ուրիշ բան է, այն ժամանակ բանը հաստատ կը լինէր: Ահա հաշուապահական տեսակէտը: Այսպէս վերաբերվողը, ի հարկէ, չէ մտածում, որ օպէրայում երգելու և աջողութիւն ունենալու համար պէտք է պատրաստվել, նա չէ ուզում հասկանալ, որ եթէ բոլորը իր նման վարվեն ու օգնեն երգչին օպէրայում երգելուց յետոյ (էլ այն ժամանակ ինչի պէտք է օգնութիւնը) էլ նա կարևորութիւն չի ունենայ գնալու Իտալիա, սովորելու, կատարելագործվելու, որ յետոյ կարողանայ օպէրայում երգել և ապացուցանել այդ մարդկանց, որոնք աչք ունեն, բայց չեն տեսնում, թէ ինքը կարող էր դառնալ և արդէն դարձել է Մազինի:

Քանի քանի համակրելի գործեր «չը ծաղկած թառամել են», չնորհիւ հաշուապահական տեսակէտի ասպետների:

Բարեգործական և առհասարակ հասարակական գործերում հաշուապահական տեսակէտով առաջնորդվողները պահանջում են, որ դուք նրանց չօաքի վրա մաթեմատիական կերպով ապացուցանէք, թէ քաղցած մարդը եթէ մի քանի օր հաց չուտի կը մեռնի, թէ եթէ քաղցածին փողտան, նա այդ փողով հաց կառնի անպատճառ և ոչ թէ քաղցրեղէն, կամ թատրոնի տոմսակ, թէ եթէ այդ փողը պահեն և նրա մեռնելուց յետոյտան՝ անօգուտ կը լինի, որովհետև դիակը հացի կարօտութիւն չունի, մի խօսքով դուք պէտք է ամեն բան հաստատէք չօաքի վրա, մանաւանդ այն, որ նուիրողի ամեն մի կօպէկը այնպէս կը գործադրվի, ինչպէս նուիրողն է ուզում, որ այդ կօպէկները որ իրան զրպանից կարող էին կորչել և առհասարակ իր ձեռքով ծախսելիս ենթարկվել զանազան պատահարների, այժմ անցնելով քաղցածի ձեռքը՝ անպատճառ մի գերբնական այժ կը ստանան «ոչ կը մաշվեն, ոչ կը կորչեն», որ դիւն ընդհանուր հոսանքին, անգիտակցաբար է ենթարկվում շրջապատողների պանդխտական վարակիչ, անխղճատակ և կորստաբեր ձգտման....

Եւ ինչպէս երևում է պանդխտութեան այդ նոր և վերին աստիճանի կորստաբեր ձևի օրինակ ցոյց տուողները՝ ազդուլեցիք են լինելու:

Թող մեր ընթերցողը կարդայ „Մշակի“ № 121-ի մէջ տպված, Ներքին-Ագուլիսից գրված թղթակցութիւնը,—և նա կը համոզվի մեր ասած խօսքերի ճշմարտութեան մէջ:

Գ. Ա.

թիւն: Ամեն տեղ պարսիկը՝ պարսիկ է. եթէ նա գնայ Ս. Պետերբուրգ—նոյնպէս իր կեղտոտ բնաւորութիւնը իր հետն է: Ով որ տեսել է Երևանի պարսկական փողոցները, ինձ հետ կը համաձայնի:

Երևանն ունի 9,200 տուն բնակիչ, որոնց 6,000-ը պարսիկներ են, 3,000-ը հայեր և 200-ը ռուսներ:

Պարսիկները պարապում են այգեպանութեամբ և մասամբ վաճառականութեամբ: Նրանց հարուստ դասը «միլքադար», այսինքն կալուածատէր է, որ իր հողերի կալուածների արդիւնքը ստանում ուտում է, առանց որ և է պարապմունք, կամ գործ տեսնելու: Պարսիկների ստոր, չունևոր դասը պարապում է մրգավաճառութեամբ և մսագործութեամբ: Իսկ Երևանի առևտուրը, վաճառականութիւնը և արհեստը բոլորը հայերի ձեռքին է: Ռուսները, ինչպէս ասեցինք, փոքրաթիւ են և այն էլ մեծ մասամբ պաշտօնական անձինք:

Շնորհիւ պտղատու և ազնիւ հողերի, Երևանն ունի շատ բարեբեր հող, ունի անթիւ, անբաւ արդիւնաբերութիւն: Երևանի բերքն է բամբակ, որ միլիոնաւոր պուդերով արտահանում են Ռուսաստան և Եւրոպա, բրինձ, կունճութ, գեղագերջակ, խաղող, գինի կտաւատ, ցորեն և այլ ազնիւ մրգեր, որ շատ առատութեամբ տալիս է Երևանի հրաշալի հողը: Հողի արգասաւորութեան շնորհիւ Երևանի անասունները աւելի պարարտ և երկայնակեաց են:

Քաղաքում կայ մի հասարակ բերդ, որի մէջ նշանաւոր է «խանի ապակեայ պալատը»: Քաղաքն ունի վեց թաղ: Զորագեղ, Ծիրանի-թաղ, Նորթաղ, Հին-քաղաք, Խանի թաղ, Շհար: Կան Հայոց վեց եկեղեցի, 6 մզկիթ պարսից և մէկ ռուսաց եկեղեցի: Հայոց եկեղեցիներից նշանաւորն կաթուղիկէ Պօղոս-Պետրոս եկեղեցին, որի մօտն են առաջնորդարանը, Գայիանեան ուսումնարանը և թեմական դպրանոցը: Երևանի հայոց ուսումնարանները և եկեղեցիները, գոհութեամբ պէտք է ասեմ, որ բարւոք վիճակի մէջ են: Երևանում կայ արական գիմնազիա, որ գոյութիւն ունի 1851 թ-ից:

Ամբողջ քաղաքը շատ գեղեցիկ է: Ջուրը այնքան առատ է, որ եթէ Երևանցիք փոքր ինչ մաքրասէր լինեն, Երևանը դրախտ կարելի է համարել:

Երևանում բնակվում են 400 կօզակ, 500 սահմանապահ զինուորներ և մի հայոց գունդ՝ Նորբայազետեան:

Շնորհիւ նոր նահանգապետի խելացի կարգադրութեան, այժմ պարսիկները առաջվայ պէս կատաղած չեն, այլ ևս չը կայ նախկին բարբարոսութիւնը:

Երևանում կայ երկու տպարան, երկու գրավաճառանոց, իսկ հասարակաց մատենադարան-ընթերցարան չը կայ. Երևանում թէ հիւրանոցները, թէ քարվանսարայները, թէ շուկաները և թէ բաղնիքները բոլորն էլ զզուելի և վերին աստիճանի կեղտոտ են: Երևանն ունի իր քաղաքային ինքնավարութիւնը, դուման և որպէս նահանգական քաղաք, այստեղ է նահանգի վարչական և կառավարչական բոլոր ատեանները:

Երևանին, որպէս նահանգական քաղաքին, չի վայելի մնալ պարսկական փոշու տակ. պէտք է լայն ուղիղ փողոցներ, նոր, գեղեցիկ, տներ՝ մաքուր շուկաներ և որ ամենագլխաւորն է, ունենալ մաքուր ջուր. ինչպէս յայտնի է, քաղաքում մաքուր ջուր չը կայ, այլ պէտք է բերել մօտակայ Ղըրխ-բուլաղ (քառասուն աղբիւր) լեռից. շատ մեծ ծախս չէր լինի, եթէ այդ լեռից քաղաք բերվէր մաքուր ջուր և ահագին աղդաբնակութիւնը կազատվէր աղտոտ ջրից:

Երևանի պատմական և անցեալ կեանքի մասին արդէն ես գրել եմ իմ «Ուղևորութեան» մէջ, ուստի առայժմ այսքան:

Շիրակեցի

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Հոկտեմբերի 25-ին

Մի նոր գեղարուեստական տաղանդ սկսում է փայլել հայկական հորիզոնի վրա: Զափաղանց ուրախալի է տեսնել, որ ազատ արուեստների պարապումը հետզհետէ զարգանում է մեր մէջ ևս: Հայ ազգի բնածին ընդունակութիւնները բացի այլ ասպարէզներից, սկսում են պարզվել և կարևոր տեղ գրաւել նաև գեղարուեստի շրջանում: Մեր արուեստագէտների դեռ ցանցառ թափ վրա աւելանում է և մի նորը, որ դատելով իր ցոյց տուած յատկութիւններից, ոչ նուազ ուշադրութեան պիտի արժանանայ մօտ ապագայում:

Կարնեցի հայ-կաթոլիկ երիտասարդ, պ. Արսէն Շաբանեան, որ ծառայում է Թիֆլիսի Առևտրական բանկի Բաթումի բաժնում, յայտնվում է իբրև աջող նկարիչ: Պ. Շաբանեան, Վենեցիայի Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանում իր ուսման ընթացքը կատարելուց յետոյ, իբրև դեղարուեստասէր, սկսում է իր ազատ ժամերին նկարչութեամբ պարապվել և քանի մի տարիների կարճ ընթացքում, այնքան զարգացրած է իր վրձինը, որ այսօր համարձակորէն կարելի է դասել Նրան յայտնի նկարիչների կարգը: Մեր մեծ ծովանկարը, Յովհ. Այվազովսկի, տեսնելով պ. Շաբանեանի նկարները, կատարեալ աջողութիւն է գուշակած Նրան. և Այվազովսկու այս վկայութիւնը, ինչպէս յայտնի է, ունի իր կշիռը: Անցեալ օգոստոս ամսի սկզբին, պ. Շաբանեան անձամբ զբնացել էր Թէոդոսիա, հռչակաւոր արուեստագէտի մօտ, նրա քննութեանն և դատողութեանը ներկայացնելու համար իր նկարչական փորձերը: Այվազովսկին նախ ընդունում է Նրան շատ պաղ և խորհուրդ է տալիս իզուր ժամանակ չը վատնել, յայտնելով, որ շատերը կարծում են ունենալ մի մասնաւոր ընդունակութիւն դէպի նկարչութիւնը, բայց իրօք—ոչինչ կարեորութիւն չունեն Նրանց աշխատութիւնները: Սակայն, երբ հետևեալ օրը տեսնում է պ. Շաբանեանի նկարները, նա իսկոյն փոխում է իր խօսակցութեան և ընդունելութեան ձևը, ընդունում է Նրան իր սեփական աշխատանոցում և այնտեղ իր հակողութեան ներքև նկարել է տալիս Նրան և ուղղում է նրա վրձինը: Ամբողջ 9 օր մնում է այդտեղ երիտասարդ նկարիչը և յարգելի ծովանկարը յորդորներով, հրահանգներով խրախուսում է Նրան: Այվազովսկի բացարձակ յայտնում է պ. Շաբանեանին, որ սրա նկարները, մանաւանդ այն քանի մի ուղղութիւններից յետոյ, որ ինքն ամենայն սիրով կատարում է, մեծ ապագայ են խոստանում և իր առաջին խօսքերին հակառակ, յորդորում է Նրան անյողդողդ շարունակել, վստահ լինելով իր կատարեալ աջողութեան վրա: Այվազովսկու խորհրդով պ. Շաբանեան գալիս է այժմ քանի մի նկար, որոնց մեծ արուեստագէտը խոստացած է անձամբ ուղարկել և ներկայացնել Պետերբուրգ գեղարուեստական ակադէմիային: Այվազովսկու գովասանքներով և յորդորներով խրախուսված, պ. Շաբանեան անընդհատ պարապվում է նկարելով և ահա այժմ մի նոր առիթ՝ մեծ խրախոյսի պատճառ է դառնում մեր երիտասարդ նկարչին, վեր հանելով միանգամայն Նրա իսկական տաղանդը գեղարուեստի այս ճիւղի մէջ:

Երէկ, հոկտեմբերի 24-ին, այստեղից Կրիմ ուղևորվելու համար Բաթում ժամանեց Նորին Բարձրութիւն, Մեծ Իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչ: Պ. Շաբանեան միտք է յղացել իր ընտիր նկարներից մինը ներկայացնել Նորին Բարձրութեան: Այս բաղձանքը յայտնում է Քութայիսի Նահանգապետ-գեներալ Շալիկովին, որը կանխապէս Նրա նկարը տեսնելով և Մեծ Իշխանի հետևորդների էլ կարծիքը ընդունելուց յետոյ, հաւանութիւն է տալիս այդ մտքին: Եւ ահա երէկ երեկոյ, պ. Շաբանեան, գեներալ Շալիկովի միջնորդութեամբ բաղդ ունեցաւ ներկայացնել Նորին Բարձրութեան, մի ընտիր ծովանկար, գեղեցիկ չրջանակում հաստատված: Մեծ Իշխանը փափագեց տեսնել նկարչին և անձամբ յայտնեց Նրան իր շնորհակալութիւնը: Նորին Բարձրութեան հրամանով, Նահանգապետն առնում և հաղորդում է պ. Շաբանեանի անունը և հասցէն: Նկարը ընդունելուց յետոյ, Մեծ Իշխանը իր ադիւտանտին ուղարկում է պ. Շաբանեանի մօտ, վերստին յայտնելու համար Նրան իր շնորհակալութիւնը: Դրսից հանդիսատեսները դիտում էին թէ ինչպէս Մեծ Իշխանը երկաթուղու վագոնում, երկարօրէն մտիկ էր տալիս նկարին: Նորին Բարձրութեան մեկնելուց յետոյ, Թիֆլիսի Նահանգապետ իշխ. Շերվաշիձէ յայտնեց պ. Շաբանեանին թէ Մեծ Իշխանը շատ գոհ է մնացած նրա նկարից:

Այս նկարը ներկայացնում էր «Русское Общество» ընկերութեան տեղիս նաւահանգիստը, որի մօտ խարիսխ էր նետած նոյն ընկերութեան «Нахимовъ» շոգենաւը: Շոգենաւի մօտ դրված է մի բարժա, հին «Константинъ» շոգենաւից ձեռած: Հեռուից երևում է Բաթումի ծովեզրեայ լեռների փոքր շղթան, որի գագաթների վրա խաղում են թեթև ամպեր: Շատ գեղեցիկ և բնական կերպով դուրս է բերված շոգենաւի և նաւահանգստի շուքի ցոլացումը ծովի վրա: Շատ աջող էր նմանապէս լեռների կողերի կազմած ձորակների մէջ սաւառնող օդի գոյնը: Այնտեղ, ուր վերջանում են լեռները, ուշադրութիւն է գրաւում բաց, խաղաղ ծովը, թափանցիկ և կապուտակ: Հորիզոնի վրա տեսնվում է մի փոքր առագաստաւոր: Պատկերի առաջ բերած տպաւորութիւնը դիտողների վրա՝ շատ գոհացուցիչ էր: Նկարի գլխաւոր արժանաւորութիւնը ներկայացնում էր բուն շոգենաւի մարմինը, որի բոլոր մանրամասնութիւնները ամենաբնական և մեծ ճարտարապետութեամբ պատկերացած, իրանց վրա մեծ ուշադրութիւն էին գրաւում: Առհասարակ ինչպէս տեխնիկան, նոյնպէս և նկարման վայրկեանը (moment) վկայում են նկարչի տաղանդը: Նկարի մեծութիւնն էր 1 արշին երկայնութիւն և 3/4 արշին լայնութիւն (առանց չրջանակի):

Պ. Շաբանեան նկարում է բնութիւնից և Բաթումի նաւահանգիստն է, որ նա գտնում է նիւթ իր վրձինին: Շոգենաւ, առագաստաւոր և նաւակ, ծովային զանազան տեսարանների վրա, զանազան դիրքով—ահա նրա ժանրը: Նրա նկարած նաւերը զարմանալի կերպով միացնում են իրանց մէջ բնական ճշգութեան հետ միասին գեղարուեստական սուր դիտողութիւն: Աջող կերպով նկարում է նաև ալիքների ծովափնեայ խաղերը:

Վստահ կերպով կարելի է ասել, որ պ. Արսէն Շաբանեանց, շնորհիւ իր բնական արուեստագէտի տաղանդին և այն յարատև ջանքերին, որով նա շարունակում է զործածել իր ճարտար վրձինը,—փայլուն ապագայ կունենայ իբրև ծովանկար: Ցանկանում ենք լիուլի աջողութիւն մեր նոր երիտասարդ նկարչին:

Ա. Սարուխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հոկտեմբերի 28-ին, Նոցա Կայսերական Մեծութիւնների, Թագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհու ամուսնութեան 25-ամեակի լրանալու օրը, Թիֆլիսի բոլոր քրիստոնէական դաւանութիւններին պատկանող և հասարակ տասնտարական մզկիթներում գոհացողական մաղթանքներ կատարվեցան: Նոյն օրվանից սկսած, քաղաքիս բոլոր թէ պետական և թէ քաղաքային դպրոցների աշակերտները և աշակերտուհիները արձակվեցան երեք օրով:

—

Տաք եղանակներից յետոյ, քանի մի օր է արդէն, որ անսպասելի կերպով զգալի ցրտեր ընկվեցան Թիֆլիսում:

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Պետերբուրգից ստացած կարգադրութեան համաձայն մի քանի օր առաջ տեղական մաքսատունը արգելեց գարիի, բրինձի և սիմինդրի արտահանութիւնը դէպի արտասահման: Բաւական թուով նաւերի տերեր, որոնք բրինձը բարձած՝ պիտի տանէին այդ բերքը դէպի Թիւրքիա, այդ կարգադրութեան պատճառով դիմել են տեղական թիւրքաց հիւպատոսին, խնդրելով նրան միջնորդելու ուր հարկն է, որ գոնէ ազատ թողնէին արդէնքից այն նաւերն ու նաւակները, որոնք արդէն բարձված են եղել կարգադրութիւն ստանալուց առաջ:»

—

Մեզ գրում են ՓՕԹԻՑ հետևեալը. «Նկատի առնելով որ Փոթիում գարիով բեռնված աւելի քան 500 վագոն կայ, որոնք պիտի հասցնէին այդ բերքը առևտրական նաւերին, արտահանման համար և ուրիշ կողմից աչքի առջև ունենալով հացահատիկների արտահանութեան մասին կառավարչական արգելքը,—գարիի գները յանկարծակի և զգալի կերպով ընկան, քանի որ հացահատիկները այլ ևս անկարելի կը լինի արտահանել:»

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մտադրութիւն կայ Ռուսաստանի երկաթուղիների վրա եղած կառավարչական վերահսկողութեան գործը հիմնաւորապէս վերանորոգել:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Ռուսաստանի գէմստվօներից մի քանիսը խընդրամատոյց են եղել կառավարութեան, որ փակվեն գինետները այն տեղերում, որտեղ անաջող հունձից ձգված գիւղացիք փոխատուութիւն կամ օժանդակութիւն են ստացել թէ մնունդի համար և թէ սերմացու ձեռք բերելու համար: Ցայտնվում է թէ շատ տեղերում գիւղացիք դրամական օժանդակութիւն ստացած լինելով, փողը ոչ մնունդի և ոչ էլ սերմացու առնելու վրա են գործ դնում, այլ միմիայն հարբեցողութեան վրա:

—

Այս օրերս Թիֆլիսի բէալական դպրոցում կայացած տարեկան ակտից երևաց, որ այդ դպրոցում այժմ ուսանում են՝ 168 ռուսներ, 108 հայեր, 73 վրացիներ և 11 թուրքեր: Դպրոցի այս տարվայ ծախսն է՝ 53,669 բուբլի, որից 39,598 բուբլին վերցրած է արքունական գանձարանից:

—

Նաւթի գինը Թիֆլիսումն էլ զգալի կերպով ընկաւ:

—

Թիֆլիսի մանր վաճառականների մէջ վերջերս բաղմացել են սնանկութիւնները:

—

Շամախու ճանապարհի վրա գտնվող Ախ-Սու կայարանից «Каспій» լրագրին հետևեալն են գրում. «Հոկտեմբերի 17-ին, Շամախուց երեք ձիանի կառքով գալիս էր մի ոմն Իվանով. ճիշդ հինգ վերստ հեռաւորութեան վրա Ախ-Սու կայարանից 8 զինուորված թուրքեր կանգնեցրին ճանապարհորդին և կառքի հետ միասին տարան դէպի անտառը. այդտեղ նրան հետախուզելով 13 բուբլի փող գտան նրա մօտ, բայց այդ փողը չը խլեցին նրանից, սակայն նրան արգելեցին ճանապարհը շարունակել: Այդ դէպքը պատահեց առաւօտեան ժամի 11-ին: Ժամի 12-ին բռնեցին Ախ-Սուից գնացող այնտեղի վաճառական Հաջի-Բայդուլա-օղլուն և սրան էլ այնտեղ տարան, ուր գտնվում էր Իվանով: Հաջի-Բայդուլա-օղլուց 400 բուբլու մանուֆակտուրային ապրանք խլեցին, բայի դրանից, նրանից խլեցին 80 բուբլի փող, ժամացոյցը և զգեստը: Այդ միջոցում կառքով անցնում էր շամախեցի մի թուրք, որին էլ նոյն վիճակին ենթարկելով՝ նրանից էլ խլեցին 72 բուբլի փող, 500 բուբլու մուրհակներ և ամբողջ զգեստը, այնպէս որ նա բոլորովին մերկ մնաց: Ժամի 2-ին մի դատարկ կառք էր անցնում. դրան էլ տարան անտառը և կառապանից 30 բուբլի փող խլեցին: Աւազակները այս երեք կողոպտվածներին մինչև երեկոյեան ժամի 6-ը այնտեղ պահեցին և հարցնում էին նրանց, թէ արքունական պօստը չուտով կանցնի՞: Կառապանները պատասխանեցին, թէ այդ օրը պօստը չը պէտք է անցնի: Այդ իմանալով, աւազակները բռնված ճանապարհորդներին արձակեցին և արքունական պօստը երեկոյեան ժամի 7-ին անվնաս կերպով այդտեղով անցաւ: Այս լուրը երբ հասաւ Շամախի, այնտեղի գաւառապետի օգնական պ. Ստեփանով, ժամի 9-ին, գնաց աւազակներին որոնելու: Սակայն մինչև այժմ հետևանքի մասին ոչինչ յայտնի չէ: Զարմանալին այս է, որ աւազակները պ. Իվանովից ոչինչ չառան և բացի դրանից նրան ծխախոտ և հաց էին առաջարկում, ասելով՝ «կերէք, կերէք մի վախէք, ձեզ ձեռք չենք տայ, մեզ պօստն է հարկաւոր»:

—

Այս օրերս Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հացի վրա նշանակված տակսան իջեցրեց ֆունտը 3½ կոպէկից մինչև 3 կոպէկ: Սակայն հացավաճառները այժմ սկսեցին շատ վատ հաց վաճառել, այնպէս որ ուտելու հնար չէ լինում: Այժմեան թխած հացը համ սև է, համ խմոր, համ էլ, որ գլխաւորն է՝ աւազախառն: Տակայի համեմատ հաց չէ վաճառվում. օրինակ, տակայում նշանակված է երրորդ տեսակի հաց, տեղական ամենալաւ ալիւրից, ֆունտը 2½ կոպէկ, բայց այդ երրորդ տեսակը փռներում բոլորովին չը կայ, և դրա փոխարէն տեղական ամենավատ ալիւրից թխած հացը ծախում են երկրորդ տեսակի տեղ ֆունտը 3 կոպէկով:

—

Վերջապէս գինու գինը սկսեց ընկնել Թիֆլիսում: Այս օրերս գերմանական կոլօնիաներից գինի բերող գերմանացիք վաճառում էին գինին թունդին 30—40 կոպէկով, իսկ Թիֆլիսի չրջանակներից բերող գիւղացիք իրանց գինին վաճառում էին՝ վեդրօն (3 թունդի) 1 բուբլով: Բայց պէտք է նկատել, որ տեղացիների պատրաստած գինին միշտ գերազանցում է գերմանական կոլօնիաների պատրաստած գինուց և տեղացիների պատրաստած գինին միշտ աւել գնով է ծախվում: Գերմանացիների գինին քաղցրահամ է, որ

մեր ընդունվում է իբրև զինու վատ յատկութիւն, լաւ գոյն չունի և զուրկ է այն անուշ հոտից, որ ունեն տեղացիների պատրաստած գինիները: Բացի այդ, գերմանացիների պատրաստած գինին երկար չէ դիմանում:

—

Թիֆլիսում բնակարանների գինը վերջերս չափազանց բարձրացել է, մանաւանդ երկաթուղու գայարանի մօտ: Այդ երևոյթը, ինչպէս երևում է, առաջ է եկել նրանից, որ վերջերս Թիֆլիսում շատ սակաւ են նոր շինութիւններ կառուցանում, իսկ զանազան կողմերից դէպի Թիֆլիս եկողների հոսանքը հետզհետէ աւելանում է:

—

Մեր «նոր դումայի» ձայնաւորների մէջ չեն հանդիպանում միմեանց դէմ լարված կրքերը: Այս բանում կարող են համոզվել նրանք, որոնք երկուշաբթի օրերը ներկայ կը զտնվեն դումայի նիստերին: Նիստերի ժամանակ մեր նոր, խելօք և ամեն բան չը հաւանող ձայնաւորները միմիայն զբաղված են միմեանց դէմ վիրաւորական խօսքեր ուղղելով, միմեանց չվայելելով և ծիծաղելով:

—

Լսում ենք, որ Թիֆլիսի ս. Սարգիս վանքի վանահայր և Թիֆլիսի կօնսիստորիայի նախանդամ Յուսիկ վարդապետ Մովսիսեանց պէտք է տեղափոխվի իր այժմեան պաշտօնից, որի տեղ նորից նշանակվում է, ինչպէս ասում են, նոյն եկեղեցու նախկին վանահայր և այժմեան Ախալցխայի յաջորդ Յովհաննէս վարդապետ Շիրակուն:

—

Թիֆլիսի շրջակայ լեռները արդէն ծածկվել են ձիւնով:

—

Ռուսաստանից սկսել են Թիֆլիս բերել, թէ մսացու անասուններ և թէ ձիեր և ծախում են շատ էժան գնով, բայց չը նայելով այդ բանին, մեր մսավաճառներին աջողվեց այս օրերս տաւարի մսի տակառն 6 կօպէկից մինչև $6^1/_2$-ը բարձրացնել տալ:

—

«Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ Արևելքի հետ առևտրական յարաբերութիւններ ունեցող վաճառականների մէջ լուր է տարածվել, որ իբր թէ շուտով կը բացվի ռուս-պարսկական առևտրական բանկ, որի կենտրոնը կը լինի Թէհրանում և բանկը բաժանմունքներ կունենայ Պարսկաստանի բոլոր առևտրական կենտրոններում:

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հրատարակել է հետևեալ տակառ հացի վրա, հոկտեմբերի 26-ից, մինչև նոր կարգադրութիւն: Փունի հացը, առաջին տեսակի, Ռուսաստանի ալիւրի 2-րդ տեսակից, ֆունտը՝ 5 կօպէկ, երկրորդ տեսակի, տեղական ալիւրից Ռուսաստանի երկրորդ տեսակի հետ խառն, ֆունտը՝ 3 կօպէկ, երրորդ տեսակի, տեղական ամենալաւ ալիւրից, ֆունտը $2^1/_2$ կօպէկ: Թոնրի հացը, առաջին տեսակի, տեղական ալիւրից, ֆունտը՝ 5 կօպէկ, երկրորդ տեսակի, տեղական ալիւրից, Ռուսաստանի 2-րդ տեսակի ալիւրի հետ խառն, ֆունտը՝ $3^1/_2$ կօպէկ, երրորդ տեսակի, տեղական ամենալաւ ալիւրից, ֆունտը 3 կօպէկ: Լաւաշներ, առաջին տեսակի, տեղական ալիւրի 2-րդ տեսակից, ֆունտը՝ 7 կօպէկ, երկրորդ տեսակի (Թուրքի լաւաշ), տեղական ամենալաւ ալիւրից, ֆունտը 4 կօպէկ:

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հրատարակել է հետևեալ տակառ մսի վրա, հոկտեմբերի 26-ից, մինչև նոր կարգադրութիւն: Տաւարի միսը առաջին տեսակի, ֆունտը՝ $6^1/_2$ կօպէկ, սուկի, ֆունտը՝ 12 կօպէկ, ոչխարի միսը, ֆունտը՝ 7 կօպէկ:

—

Ցիշեցնում ենք հայոց հասարակութեան, որ այսօր, հինգշաբթի օր, հոկտեմբերի 31-ին, Թիֆլիսի հայոց դերասանական խումբը կը ներկայացնէ քաղաքիս մեծ թատրոնում «Արշակ II» դրաման, նոր սարք ու կարգով: Կը մասնակցեն զինուորական և երգեցիկ խմբեր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԻՐԽՕՎԻ ԵՕԹԱՆԱՍՆԱՄԵԱՑ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Փառաւոր տօնախմբութիւն էր դա. Յօբելեաններ, ծննդեան տօնակատարութիւններ Բերլինում, որը լի է բազմատեսակ գիտնականներով, սովորական բաներ են և այդ յօբելեանների բոլորի ընթացքն էլ, ըստ սովորականին, արտաքուստ բաւական նման են միմեանց: Ընկերութիւններից ու պաշտօնակիցներից եկած բարեմաղթութիւններ, ուղերձներ ու դիպլոմներ, շքադրամներ ու շքանշաններ, ճառեր ու հացկերոյթներ կազմում են սովորաբար այն հանդէսը, որով տօնվում է այս կամ այն հռչակաւոր գիտնականի կեանքի կամ զարգացման որ և է նշանաւոր օրվան տարեդարձը. «ամբիոնը կառուցած է և ամեն ոք սպասում է հանդիսին» և—արդէն առաջուց ինքն էլ լաւ գիտէ թէ նա ինչպէս կանցնի: Սակայն, ինչ առանձին տարբերութիւն այս անգամ, երբ Վիրխովն է բոլորում իր եօթանասնամեակը, այն մեծարանքի մէջ, որ նրան է մատուցվում, և ուրիշ շատ տօնախմբութիւնների արհեստական ծիսակատարութիւնների մէջ:

Մեծարանք—արդարև, դժուար կը լինէր այլ անուն տալ այն անկեղծ, պատկառելի, սրտագին ձօներին, քան այդ խօսքը, որ սովորաբար թագաւորների ու իշխանների համար է գործածվում: Մենք այնքան էլ անճաշակ չենք, որ հնամաշ պատկերը՝ «հոգեկան աշխարհի իշխաններ»—այստեղ մէջ բերենք: Թէ ինչ է Վիրխով՝—այդ գիտեն արևելքը և արևմուտքը: Սակայն այն խոստովանութիւնը թէ՝ «դու մեր մէջ ամենից մեծն ես», մի խոստովանութիւն, որ արտայայտվում էր ամեն խօսքի, ամեն եղանակի մէջ, որով ամենքը մօտենում էին յօբելեարին, ընդհանուրի տրամադրութիւնը, նոյն իսկ հանդիսատեղի արտաքին սարք ու կարգը,—այդ բոլորը այնքան զօրեղ կերպով արտայայտում էին մի ճշմարիտ «մեծարանք», որ ոչ ոք չէր կարող խուսափել անձամբ զգացած այդ տպաւորութիւնից: Եկողը եկել էր լոկ շնորհաւորելու, բայց վերադառնալիս զգում էր, որ ինքը նրան մեծարանք է մատուցել: Այս էլ պէտք է աւելացնել. ամեն այդ տեսակ հանդէսներում հանդէս են գալիս պատգամաւորութիւններ և, բարեբաղդաբար, ատենախօսում է միայն մէկը, մինչդեռ միւսները լոկ իրանց թուով են ներգործում: Անշուշտ այստեղ էլ կային պատգամաւորութիւններ, անթիւ ու անհամար, որպէս ծովափի աւազ: Սակայն դրանց վրա առանձին դրոշմ դնողը այն հանդամանքն էր, որ այստեղ իւրաքանչիւր պատգամաւորութեան գլուխ անցած էին մարդիկ, որոնցից ամեն մէկը կարող էր, ամենայն իրաւամբ իբրև ճառախօս և իբրև պարագլուխ հանդիսանալ: Մի խօսքով այդտեղ էին այն բոլորը, ինչ որ Բերլինը, իբրև գիտական ինտելիգենցիաներ, կարող էր հանդէս բերել, այլ և շատ շատերը ամենահեռաւոր տեղերից: «Ասիայի հեռաւոր ափերից, աշխարհի ամեն ծայրերից եկել էին նրանք»: Տօքիո և Մոնտեվիդէօ, Պավիա և Կաղան, Ստոկհոլմ և Լոնդօն, Ուպսալա, Բերն, Տօմսկ և ուրիշ բազմաթիւ քաղաքներ ուղարկել էին իրանց առաջնակարգ գիտնականներին, անձամբ շնորհաւորելու: Տօնախմբութեան այդ միջազգային բնաւորութիւնը, բժշկականութեան ամենամեծ գիտնականների այդ միախմբումը, Վիրխովին ողջունելու այն օրը, որ սաղմոսերգուի խօսքերով, կեանքի սահմանն է կազմում—այդ տքնութեամբ և աշխատանքով լի կեանքի—ամբողջ քաղաքակիրթ աշխարհի այդ միահամուռ մասնակցութիւնը նրա տարեդարձին, այդ էր, որ ամեն մի հանդիսակցին յիշեցնում էր Վիրխովի ամբողջ նշանակութիւնը: Ամեն մէկի վրայով կարծես անցնում էր անմահականութեան շունչը:

Իրաւամբ ենթադրելով, որ Շելլինդեան փողոցի վրա գտնվող յօբելեարի տունը, որ անկասկած պէտք է կրէ մարմարիօնի պատաբեր տախտակը, անկարող պիտի լինէր անհամար հիւրեր ամփոփելու, «Kaiserhof» հիւրանոցի մեծ դահլիճն էր պատրաստված հանդիսի համար: Nomen et omen: Որովհետև իրաւ որ կայսերավայել էր այն ամենը, ինչ որ տեղի ունեցաւ այդտեղ: Բարձրագիր դահոյքի վրա, մի երկայնաձև, ծիրանեգոյն թաւիշով պատած սեղանի մօտ, որ իր վրա կուտակված պատաւոր ընծաների բեռան տակ սկսել էր կորանալ, դրված էր մի ծիրանեգոյն աթոռ Վիրխովի համար և ահա այդ աթոռի առջևն էր որ ժամերով անցնում էին բազմաթիւ ընկերութիւնների պատգամաւորները: Զիմացողը հէնց այստեղ կարող էր տեսնել, թէ որքան ընդարձակ և բազմակողմանի է եղել այս մի հատիկ մարդու գործունէութիւնը: Սոսկ մահկանացու մի մարդ գլխովին զբաղված պէտք է լինէր, եթէ ուզենար այդ բեռներից մէկը իր կոչման միւս բեռանը կցել—մինչդեռ այստեղ անդադար կրկնվում էր. «մենք յանձնարարութիւն ունենք մեր ընկերութեան կողմից մեր ամենագործունեայ անդամակցին մեր յարգանքը մատուցանելու»: Թեթևակի անդամ նկարագրել այդ բազմակողմանիութիւնը, կը նշանակէր ամենքին յայտնի բաները նորից կրկնել այստեղ:

Ab Jove principium. Բժշկականութեան մինիստրը զանց չէր առել, ինքն անձամբ ներկայ զտնվելու անկարող լինելով, բժշկականութեան տնօրէն պ. Բարտշի միջոցով յօբելեարին ողջոյն և բարեմաղթութիւն անելու: Պ. պատգամաւորն իր կողմից աւելացրեց, թէ ամենաթանգագին յիշատակը իր պաշտօնավարութեան ընթացքում այն պիտի լինի, որ ինքը Վիրխովի հետ միասին աշխատել է բժշկականութեան համար կազմված գիտնական մասնաժողովի մէջ: Դրանով վերջացաւ միակ բարձրագիր պաշտօնեայի շնորհաւորութիւնը. դրանից յետոյ եկողները ամենքն էլ պաշտօնակիցներ էին, պաշտօնակիցներ Վիրխովի առմամբ, այսինքն աշխատակիցներ:

(ԿԸ շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Միջազգային խաղաղութեան կօնգրէսը Հռոմում մի յատուկ յանձնաժողով է ընտրել իր անդամներից՝ միջազգային ընթացող վէճերը քննելու և միջոցներ գտնելու այդ վէճերը խաղաղութեամբ կարգադրելու համար:

—«Times» լրագրի Վիէննայի թղթակիցը հաստատ աղբիւրից հետևեալ տեղեկութիւններն է ստացել Եմէնում ծագած ապստամբութեան մասին: 1) Ապստամբները, որոնք առհասարակ 40,000 հոգի են, քսան գնդեր են կազմում, չէյխ Համիդ-Էդդինի հրամանատարութեան տակ: 2) Ապստամբները գրաւել են մի քանի ամրոցներ, և Թիւրքաց զօրքի գլխաւոր ոյժերը պաշարված են Նահանգի գլխաւոր քաղաքում, ուր Թիւրքաց հրամանատարն է գտնվում: 3) Թիւրքաց գլխաւոր հրամանատարը 20,000 հոգուց բաղկացած օգնական զօրք պահանջեց յայտարարելով, որ ինքն չէ կարող ապստամբութիւնը ճնշել, եթէ իր տրամադրութեան տակ չը դրվի 40,000 զինուորներից բաղկացած մի զօրք: 4) Ապստամբների առաջնորդը պահանջեց Թիւրքաց կառավարութիւնից՝ ազատել հինգ տարի շարունակ ամբողջ ազգաբնակութիւնը ամեն տեսակ հարկերից, այդ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ, հարկերը փոքրացնել. տեղական դատաւորներ ընտրել տեղական մահմետականներից և Եմէնի քաղաքացիական նահանգապետ նշանակել տեղացիներից մէկին: Թիւրքաց գլխաւոր հրամանատարը տեղեկացրեց ապստամբների առաջնորդին, որ նրա պահանջները քննութեան կառնվեն, միայն պէտք է ապստամբները զինադադար անեն մինչև բանակցութիւնների սկսվելը: Ապստամբները հրաժարվում են զինաթափ լինել և քաղաքացիական պատերազմը պէտք է վերանորոգվի:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 18-ին, ուրբաթ, որպէս կարդում ենք մայրաքաղաքի լրագիրներում, կայացաւ Պետերբուրգի Կայսերական Հնագիտական ընկերութեան արևելեան բաժնի նիստը, բարոն Բոդէնի նախագահութեամբ: Այդ նիստում Ժուկօվսկիյ կարդաց «Բաբիլների Ջարդի մասին Եզդում» վերնագրով զեկուցումը, որ նա կազմել է Պարսկաստանից իր ստացած մի նամակի հիման վրա: Որպէս յայտնի է, բաբիները պատկանում են կրօնական քաղաքական մի աղանդին, որի հիմնադիրը՝ Բաբ, մեր դարի քառասնական թուականների վերջում, սկիզբ դրեց այդ շարժմանը: Ծագում առնելով, անկասկած, քրիստոնէական աղդեցութեան տակ, այդ շարժումը, ներշնչված լինելով բարձր—բարոյական սկզբունքներով, խախտում է ուղղափառ մահմետականութեան հիմունքները: Վերջին բռամազանի ժամանակ, Եզդ քաղաքում, ուր նահանգապետի պաշտօնը վարում է Շահի թոռը՝ Ջէմիալէդդուէ, Իսպահանի յայտնի գենեբալ-նահանգապետի որդին, որը իր հօր կամքի հակառակ իրան պարսկական գահի թեկնածու է համարում, երկու բաբիներին, միայն նրա համար որ մզկիթ մտան, բռնեցին և բաբիզմի մէջ մեղադրվող հինգ այլ անձանց հետ բանտարկեցին: Ուլէմների դատարանի առջև հրաժարվելով բաբիզմը ուրանալ, բոլոր եօթ մեղադրվածները մահվան դատապարտվեցան: Նահանգապետի ներկայութեամբ, բաբիներից առաջինի վիզը օղակ զցեցին և տուեցին հրէաներին, որոնք քարշ տուին նրան դէպի բազարը. մնացածներին բանտից դուրս բերին երաժշտութեամբ, թմբկահարութեամբ և ուղղափառների ահագին ամբոխի ուղեկցութեամբ, որոնք աշխատում էին մասնակցել հանդիսին, որպէս զի երկնային վարձատրութիւն ստանան բարի գործ անելու համար: Բաբիներին ծակծկում էին նիզակներով, կտրտում էին նրանց գլուխները և գնտակահար էին անում նրանց դիակները:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 հոկտեմբերի: Այսօր, Նոցա Կայսերական Մեծութիւնների ամուսնութեան 25-ամեակի օրը, Իսակիէվեան տաճարում հանդիսաւոր մաղթանք կատարվեց Կայսերական ընտանիքի անդամների և բարձր հասարակութեան ներկայութեամբ: Մաղթանքներ կատարվեցան նոյնպէս Պետերբուրգի բոլոր եկեղեցիներում և հիմնարկութիւններում: Լրագիրները շնորհաւորական յօդուածներ զետեղեցին: Կայսրութեան զանազան քաղաքներից տեղեկութիւններ են ստացված, որ նուիրատուութիւններ են ստացվել այդ հանդիսաւոր օրը յաւերժացնելու համար:—Այսօր Իսակիէվեան տաճարում ձրի բաժանեցին Ե. Վ. Բոդդանովի կազմած «Թագաւորի և Թագուհու արծաթէ պսակի առիթով» վերնագրով պատկերազարդ գրքոյկը: Գրքոյկի մէջ նկարագրված են Նոցա Մեծութիւնների պսակադրութեան առիթով եղած տօնախմբութիւնները և հաղորդվում է քրիստոնէական վարդապետութիւն ամուսնութեան և ընտանիքի մասին:

ՊԱՐԻԶ, 28 հոկտեմբերի: Պատգամաւորների ժողովին ներկայացված է մի առաջարկութիւն՝ 100,000 ֆրանկ տալ ֆրանսիական զիմնազիա կառուցանելու համար Պետերբուրգում:

ԵԱԼՏԱ, 29 հոկտեմբերի: Այսօր Թագաւոր Կայսրին մատուցվեց Տավրիկեան նահանգական զէմստվոյի ադրէսը՝ 200,000 բուբլի դրամագլխի նուիրաբերութեամբ, որի տոկոսները պէտք է տրվեն Տավրիկեան նահանգի անպտղաբերութիւնից վնասվածներին:

ԼՕՆԴՕՆ, 29 հոկտեմբերի: Լորդ-մէրի մօտ եղած բանկէտին մարկիզ Սալսբրի ասեց, որ խաղաղութեանը ամենափոքր վտանգ անդամ չէ սպառնում և որ ժողովուրդները կամաց կամաց պատերազմ են սկսում վարել առևտրական շրջանում. մի և նոյն ժամանակ Անգլիան հաւատարիմ է մնում ֆրիտրէդերեան (ազատ առևտրի կողմնակից) սկզբունքներին:

ՊԷՐՆԱՄԲՈՒԿՕ, 29 հոկտեմբերի: Բիօ-Գրանդէ դօ Սուի նահանգը իրան անկախ յայտարարեց: Ամբողջ երկրում անբաւականութիւն է տիրում:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 29-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	99	ր. 80	կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	49	» 15	»
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	39	» 55	»
Ոսկի — — արժէ . .	8	» 04	»
Մաքսային կուպօններ — . .	161	» —	»
Արծաթ — — — . .	1	» 14	»
Բօրսային դիսկօնտներ — . .	$6^1/_2$	» 8	»
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . .	99	» 50	»
— — — — 2-րդ —	99	» 50	»
— — — — 3-րդ —	—	» —	»
— — — — 4-րդ —	—	» —	»
— — — — 5-րդ —	—	» —	»
— — — — 6-րդ —	99	» —	»
6% ոսկեայ բլնտա	164	» —	»
4% ոսկեայ փոխառութիւն	—	» —	»
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	» —	»
— — — — 2-րդ —	96	» 75	»
— — — — 3-րդ —	96	» 75	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	229	» —	»
— — երկրորդ —	211	» —	»
Պետական. երկաթուղային բլնտա .	101	» —	»
$5^1/_2$% բլնտա	—	» —	»
4% ներքին փոխառութիւն	92	» —	»
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100	» —	»
Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. — — ,	198	» —	»
$5^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի.	101	» —	»
$4^1/_2$% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	146	» 25	»
— — — թղթադ.	97	» 50	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	98	» 25	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	96	» —	»
Օդէսայի — — .	98	» —	»
Թիֆլիսի — —	—	» —	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	» —	»
— — Քութայիսի — — .	—	» —	»

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտարարում է, որ Նոյեմբերի 5-ին, առաւօտեան ժամի 10-ին, իր դիւանատանը պիտի լինի աճուրդ՝ վարձով տալու համար Հաւլաբարում գտնվող 476 դեսեատին հող, ԳԱԶ այրելու համար, երեք տարի ժամանակով:* 1—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ է *քաղաքիս հայ հասարակութեանը, որ առաջիկայ Նոյեմբերի 3-ին, կիրակի օրը, առաւօտեան 11 ժամին վանայ աւագ եկեղեցում Նոյն գանձարանին նուիրաբերող անձանց ննջեցեալների հոգու յիշատակի համար մատուցվելու է ս. պատարագ և կատարվելու է հոգեհանգստեան պաշտամունքի կարգ քաղաքիս բոլոր հայ հոգևորականութեան ներկայութեամբ:*

Նախագահ վարչութեան՝ Գրիգոր քահանայ Տէր-Բարսղեան 1—2

ԲԺՇԿԱՊԵՏ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Տեղափոխվել է Գօլովինսկիյ Պրոսպէկտ ս. Միզոեվի, № 5, Թիֆլիսի ժողովարանի հանդէպ: 2—5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱԺԷՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 1/13 Նոյեմբերի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ CAMABODGE (ԿԱՄԲՕԶ) *շոգենաւը, նաւապետ* REMES (ՐԷՄԷՍ) *դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հաւր, Լօնդօն, մտնելով և միջանկեալ նաւահանգիստները:*

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ՝ ՄԱԼԱՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, *իսկ* ԲԱԳՈՒԻ *մէջ՝* ԳՕԼԴԼՈՒՍՏ: 2—2

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ
ՊԱՍԽԱԼԻԴԻ *եղբայրների Ֆիրմայի*
Բրուսայում (Թիւրքիա)
Պասխալիդի եղբ. ցէլիլէր սերմ,

ինչպէս յայտնի է արդէն կովկասեան շերամապահներից շատերին, յայտնվում է ամենաառողջ և տալիս է մինչև 35 ֆունտ հում սպիտակ ԲՕԺՕԺ սերմի 1 զօլօտնիկից: Ծախվում է քառակուսի արկղներում, 8 զօլօտնիկ իւրաքանչիւրում, կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ: Գինը զօլօտնիկի 75 կոպէկ:

Սերմ առնել ցանկացողները մեծ քանակութեամբ կարող են դիմել՝ Թիֆլիս, ԴԱՎՐՇՕՎԱՅՍ փողոց, վրաց Ազնուականների բանկի քարվանսարայ, № 119, Պասխալիդի եղբայրներին: 3—5

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ՝ *6-ին Նոյեմբեր ամսոյ 1891 ամի, երեկոյեան 8 ժամին, լինելու է աճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու Նոյն դպրոցի կալուածքը № 46 (ընծայած Հանգուցեալ Յարութիւն Օքջեանցից), որ գտնվում է Կուր գետի հեղեղատի „Սաղի" վրա: Պայմանաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը:* 3—3

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտարարում է, որ Նոյեմբերի 12-ին, ժամի 11-ին առաւօտեան, Վարչութեան ատեանում, պիտի աճուրդով վարձու տրվեն զանազան տեղերը Կուր գետի՝ սառուց կոտրելու համար. կօնդիցիան կարելի է տեսնել ամեն օր ժամի 10-ից մինչև ժամի 2 առաւօտեան:* 3—3

Լոյս տեսաւ և վաճառվում են Թիֆլիսում կենտրոնական գրավաճառանոցում և „Տարազի" խմբագրութեան մէջ, իսկ Շուշի—Աբրահամեանցի գրավաճառանոցում

1) Աղա-Մուհամմէդ Շահը Շուշում, գինը 2 կոպէկ:
2) Վիլհելմ Թելլ, Լամարտինի . . 20 „

Թարգմանութիւն Հ. Առաքելեանի:

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ
„ԴԱՆԻԱ"
ԹԻՖԼԻՍՈՒՄ

Քաղաքի կենտրոնում, Գօլովինսկի պրոսպէկտի վրա: Գեղեցիկ և մաքուր կահաւորված սենեակներ. օրը 60 կոպէկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ զիջում է անվում:

Կերակուրները թարմ և համով:

НОВЫЕ НОМЕРА
„ДАНІЯ"
ВЪ ТИФЛИСѢ

въ центрѣ города, на Головинскомъ проспектѣ. Изящно и чисто меблированные номера отъ 60 коп. до 5 руб. въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная. 28—36

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ *յայտնում է սրանով, որ ընկերութեանս 1891 թվի անդամները կարող են ստանալ կենտրոնական գրավաճառանոցից ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները.*

1) Տօլստոյ—Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը:
2) Վալտեր—Հաւատարիմ Սավիարին:
3) Պէստալոցի—Լինհարդ և Գէրտրուդ:
4) Նալ և Դամայանտի:
5) Ռոզընհարն—Նաւի փոքրաւորը:
6) Սպիրի՝ Ուռենց Յովսէփ: 9—13

„ՄԻՇՈՒՆԱՑ"

ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՐԻՍ ԳՈՒՏՄԱՆԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բաքուում Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մօտ: 46—50 (հ)

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ *վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու* ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ *առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:*

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 1%-ից մինչև 12%. Վաճառվում է եղբարց Յովհաննէսների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. *Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝* С. П. Мануэльянцу.

Գինն է 1 ռուբլի: Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի: 29—150

ԱՒԱՆԴՎՈՒՄ ԵՆ
Ֆրանսիական, անգլիական և գերմանական լեզուները
ԲԵՐԼԻՑԻ
Ամերիկեան նոր մեթոդով,

Որի օգնութեամբ աշակերտները ամենակարճ ժամանակում ազատ կերպով խօսել են սովորում:

Գանձակայա փողոց, տուն Շահնազարովի, № 15. երրորդ յարկում: 4—5

ПАРФЮМЕРІЯ ВИКТОРІЯ РЕЙНА.
мыло олео-вазелиновое
РОЯЛЬ-КОНГО.
духи высшаго достоинства
ИКСКОРОНАКЪ И ВІОЛЕТЪ.
о-де-колонъ роялъ
КОЛОНЪ ЦВѢТОЧНЫЙ ЗАПАХОВЪ.
о-де-колонъ
РАЗНЫХЪ
Въ Высочайше утвержденномъ Кавказскомъ Товариществѣ торговли автокарскими товарами въ Тифлисѣ и Баку.

ՊԱՐՖԻՄԷՐԻ
ՎԻԿՏՕՐԻԱ-ՐԷՅՆԱ.
օլեո-վազելինեան սապոն
ՐՕՅԱԼ-ԿՕՆԳՕ
տեսակէ ամենաբարձր
ԻԿՍԿՈՐՕՆԱԿ ԵՒ ՎԻՕԼԷՏ
անուշահոտութիւններ
ՕԴԸԿՕԼՕՆ ՐՕՅԱԼ
օղեկոլոն ծաղկահիւթ
ԶԱՆԱԶԱՆ ՀՈՏԵՐԻ
դեղագրական ապրանքների բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում և Բաքու. վաճառման մասին 20—50 (հ)

Մ. Գ. ՑԷՑՏԼԻՆԻ
ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԻ
ՕՊՏԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրեայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԷՆՍՆԷՆԵՐ *և* ԼՕՐՆԷՏՆԵՐ: *Թատրոնական և դաշտային* ԲԻՆՕԿԼՆԵՐ, ՋԵՐՄԱՉԱՓԵՐ, *թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վանների համար: Վերաստուգված և վկայական ունեցող* ՄԱԿՍԻՄԱԼ *ջերմաչափեր: Լօրնէտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետալական թելեր:*



Ակնոցներ և պէնսնէներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապագիների դնելը:

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են: 29—50 (հ)

Թիֆլիսի Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում և Բաքու Թառայեանի գրավաճառանոցում վաճառվում են՝

ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆԻ
հետևեալ հրատարակութիւնները՝

1) «Համլէտ», ողբերգութիւն . . . . . գինն է 60 կոպ.
2) «Աննա Սարոյեան», վէպ. . . . . — 30 »
3) «Երեք քաջեր», կատակ. . . . . — 20 »
4) «Ա՛յ քեզ օյին», վոդեվիլ. . . . . — 20 »
5) «Էլիզայի վիշտը», վէպիկ . . . . . — 10 »
6) «Էմմանուէլ Մանիի թաղումն» . . . . . — 5 »

Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Василію Камальянъ. *Ճանապարհածախսը հրատարակչի վրա է:* 5—5

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Октября 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.